

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ձր.
Վեցամսեայ . . 6 "


ԱՐՏԱՍԱՀԱՆԱԿ

Իրկու թիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 Ձր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2,60 Տօլար
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցման տողը
20 սանդիւն



Rev. Père G. Kalemkarian Michitaris Vienne
tengasce No. 4

ՀԱՍՏԵ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ
լիւ տրութիւնք

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԶՐԻ ԾԱՆՈՒՅՈՒՄ

ԶԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԻ

Պաշտօնական ազդերու տողը (25 անգամ)
10 սանդիւն:

Անհատական ազդերու տողը (25 անգամ)
20 սանդիւն:

Երեւանի քաղաքի քաղաքացի 20 0/0
գնի:

Փոխարկեր դրամ կամ նամական
դրոշմ դրկի կանխիկ:

ՄԱԿԵԴՈՆԱՅԻՔ ԵՒ ՋԱՅՔ

Թայիլի Սեպտ. 4 թիւի հետեւեալ
խմբագրականը օգտակար կը նկատենք
թարգմանաբար մեր ընթերցողաց ու-
շադրութեանը ներկայացնել:

Մակեդոնական գոմիթէի երկու
բաժանումներէն մէկին պետք է
զոյզ գնդապետ Զօնչէֆի նոյնպէս
և գնդապետ Նիքօլֆի—որը նոյն-
պէս անգամ է այդ մարմինը—ծեր.
բաժնւումը ցոյց տալ կերելի թէ
Ֆէրտինանտ իշխանը կը հաւատայ
որ այդ ընկերութեան յարմարելու
քաղաքականութենէն աւելի ոչինչ
կարելի է ակնկալել: Զերբակալումը
խումբի մը վերջերս Մակեդոնիոյ
սահմանադրութիւնը անցնելու համար
ըրաժ վորձէն յառաջ եկաւ: Դա-
տաւորին առաջ տեղի ունեցած հե-
տադատութիւնը ցոյց տուաւ թէ
գաւազները? Գոմիթէին կողմանէ
զինուած էին: Կը յայտարարուի թէ
անոնց վրայ գտնուող ոստիկանու-
թեան գաւառուած թղթերը դրական
ապացոյցներ կը պարունակեն ան-
քամներուն դէմ, նոյնպէս և նա-
խագահին: Գնդապետ Զօնչէֆ և
իր ընկերը, որոնք սահմանադրու-
թիւն շատ մօտ ձերբակալուած էին,
յեղափոխական կամ աւազակային
խմբերու կազմակերպութեան յան-
ցանքով ամբաստանուած են: Խնդ-
րոյն օրինական երեւոյթները ինչ
որ ալ ըլլան, տարակուսիլ կարելի
չէ որ, յարմար առիթին այս տե-
սակ խումբերու կազմութիւնը գո-
միթէի օրինաւոր ծրագրին մէկ
մասն է: Դժբաղդաբար, գնդապետ
Զօնչէֆի կողմէ զեկեւարուած գո-
միթէի ճիւղը տպահովապէս կազմա-

կերպութեան կարեւորագոյն մասը
չէ: Պ. Պօրիս Սարաֆով, որուն
անունը պիտի յիշուի Ռումանիոյ
մէջ գործադրուած սոսկալի սպա-
նութեան մը կապակցութեամբ,
հակառակորդ գործադիրին քիչ
կարեւորութիւն տալ կը ձեւացնէ:
Վերջերս իր աքորափայլէն կը
բացատրէր թէ, մինչ ինք և իր
յառաջացած ճիւղին ընկերները
բազմութիւն քաղաքներու և գիւղե-
րու մէջ զօրաւոր ազդեցութիւն ա-
ռաջ բերին, Զօնչէֆի մասնաճիւ-
ղերը միակ թղթի վրայ գոյութիւն
ունին: Արդեամբ նա ծանոց թէ
անոնք այնքան տկար էին որ մօ-
տաւորապէս անոնց տեղի տալուն
կը սպասէր: Եթէ ոստիկանութիւ-
նը կտրուկ կերպով իր գործունէ-
ութեան վերջ մը դրած չըլլար,
գնդապետ Զօնչէֆ անտարակոյս
երկու խումբերու յարաբերական
ուժերու մասին եղած այս յայտա-
րարութիւնը պիտի չըէր սպուշ
հակառակորդ գաւազրի մը սովո-
րական յանդուգն գործունէու-
թեամբ: Իր ձերբակալումը առ-
նուազն պէտք է զինք ազատէ իր
հակառակորդներու կողմէ այնքան
անզլութեամբ գողտուած կասկա-
ծէն թէ ինք Արքունեաց գաղտնի
քաջալերութիւնը կը վայելէ—ի՞նչ
սակայն անոնք այնքան առաջ չե-
րան ըսելու թէ Ֆէրտինանտ իշ-
խան կը ջանայ գնդապետին իբր
հայրենասէր ունեցած ինչպէս վրայ
եղող համարը վերակ սնունդ պրդ
տիկ և խոհական հալածութիւն մը:
Թէ Պուլկար կառավարութեան
ձեռք առած այս ուղղութեան հե-
տեւանքը ինչ պիտի ըլլայ: շատ
յանդուգն կըլլայ այժմէն ըսել:
Մէկ կողմէն նա կրնայ «յառաջա-
ցած ճիւղը» ինքզինք ցոյց տալու
իրենց սովորական միջոցներուն մը-
ղել: շատ հաւանական է, թերեւս,
«Պ. Սարաֆով» որ նրբազգած ըլ-
լալէ զուրկ չէ, ընդունի թէ ասի-
կայ յայտնի նշան մըն է թէ ճիւղ
այս պահուս Ս. Բեդրսպուրկէ դե-
պի գործօն հայրենասիրութիւն չէ
կարելի քաջալերութիւն սպասել:
Նա վերջերս շատ խիւստի կերպով
գիտել կուտար թէ՛ այս տարի Սա-
կեդոնիոյ մէջ «գեպներու» հաւա-
նականութիւնը թրքական զորդ-

ուումներէ և «տարբեր պարագանե-
րէ» կախում ունի: Ասիկայ շատ
որոշ գիտողութիւն մըն էր, որով
հետեւ, թէեւ Պ. Սարաֆով և իր
ընկերներու մեքենայութիւնները
կրնան միշտ ապահովել «թրքական
գողութիւն» շարունակութիւնը, գո-
միթէի ներկայացուցիչներու կող-
մանէ վրդովուած նահապետութիւն
զօրաւոր ամրոցներու հաստատու-
թեան ձեւով, սակայն տարբեր ա-
ռիթներու իրենց հեղինակութիւնը
բացարձակապէս սահմանափակ է:
Այս հանգամանքներու կարեւոր-
ագոյնը բնականաբար կառավարու-
թիւններու դիրքն է, և մասնաւո-
րապէս այժմ կառավարութիւններու
որոնք անմիջական կապակցութիւն
ունին Պալքանեան նահանգներու
խաղաղութեան հետ: Իրեն առջեւ
ունենալով իշխատակը՝ թէ հայերը
ինչ գին վճարեցին 1895 և 1896ին
երբ Սուլթան Համիտ ազատ թող
ուեցաւ խնդիրները իր սովորական
միջոցներով կարգադրելու: Նոյն
իսկ «յառաջացած-ճիւղը» պիտի
վարանի սարսափելի դէպքեր գրգ-
ռելու, կռիւներով հաւանականու-
թեան թէ արիւնհեղութիւնը կրնայ
Եւրոպան միջամտելու առաջնոր-
դել:

Հաճելի է տեսնել թէ՛ վրէժխնդ-
րութեան և սարսափի խառն զգա-
ցումները՝ որոնք Սուլթանը և իր
ժողովուրդը առաջնորդեցին այդ
դժբաղդ ցեղի ընդհանուր կոտո-
րածին՝ վերջացած ըլլալ կերելին:
Լուսաւորչական Եկեղեցականու-
թիւնը միշտ հաւատարիմ եղած է
իր հօտերուն: Եւ իրողութիւնը՝
թէ Ապտիլ Համիտ գոհացուցած է
Պատրիարքը և թէ ինք կը խոստա-
նայ իր հայ հպատակներուն հետ
վարուիլ մեղմօրէն՝ բաւական գո-
րաւոր ապացոյց մըն է Նորին վե-
հափառութեան բարի գիտումնե-
րուն: Պատրիարքը զօրաւոր կեր-
պիւ մերժեց իր պարտականու-
թիւնները վերստանձնել մինչեւ որ
Սուլթանի կողմանէ իրեն եղած
խոստումները չը գործադրուեցան:
Նա անմիջապէս հայթայթեց իր
ժողովուրդին եկեղեցական և աշ-
խարհական առեւաններէն Նորին
վեհափառութեան պահանջած ու-
ղերձը, որով կը յայտարարուէին ի-

րենց հաւատարիմ անձնութիւնը
և խաղաղապէս տրամադրութիւն-
ները: և երկուշաբթի նա կարո-
ղացաւ զեկուցանել թէ իրենց դէմ
ուղղուած բացառիկ օրէնքները
յետս կոչող իրատէ մը շնորհուած
էր: Սիրելի է յուսալ որ իրատէն
պիտի գործադրուի և կարեւոր
պատճառներ կան թէ ինչու Սուլ-
թանը պէտք է ուղէ բարեկամական
յարաբերութիւնները վերահաստա-
տել, որոնք շատ երկար առիթն է
ի վեր գոյութիւն ունէին մահմե-
տականներու և քրիստոնեայ հա-
սարակութեան մը միջեւ, որը ի-
րենք սովոր էին զանազանել միւս
բոլորէն իբր «Միլլէթի Ստորգա»
(հաւատարիմ ժողովուրդ): Մինչեւ
հանրածանօթ Հիշակի և ուրիշ
գաղտնի ընկերութիւններու հաս-
տատութիւնը՝ որոնք ամէն դասա-
կարգի թուրքերը լեցուցին ամե-
կատաղի վախով և առեւելութեամբ
իրենցդէմ, դէպի ութսունական
թուականներու վերջերը հայերը
վայելած էին տիրող ցեղի թող-
տուութիւնը: Բնականաբար անոնք
կեպուղներ էին, բայց և այնպէս
անոնք ճանչցուած էին Պուլկարնե-
րու, Յոյներու և ուրիշ գաւազնորդ
անհաւատներու խռովայոյզ մի-
տումներէն բացարձակապէս ազատ,
ժրաշան, օգտակար և կարող ընե-
լու ամէն տեսակ առեւտուր և գործ
զորս չէր կարելի սպասել որ բարի
Մահմետականները ընէին իրենց
համար:

Սուլթանը այնքան հասակար-
գերու առեւելութիւնը իր վրայ հա-
ւիրած է որ ինք պէտք է փափաքի
«հաւատարիմ ժողովուրդին» վստա-
հութիւնը վերստանալու, և առանց
ինկատի առնելու այն ամէն սար-
սափները որոնց ներթափեց գա-
նունք, ինք պէտք է այնպէս ընէ,
եթէ իմաստութիւն և քաջասրտու-
թիւն ունի զանոնք ապահովելու
նորանոր կոտորածներու դէմ, վե-
րահաստատելով զիրենք իրենց հին
վիճակին մէջ:

Թարգմ. Գ. Տ.

ՌՈՒՍ ՄԱՍՈՒԼԸ

Գ.

Ընթերցողը տեսաւ ուրեմն թէ ուսւ
յրագիր մը ազատօրէն ու պայմանա-
պէս իր քաղաքական համոզումը յայտ-
նելու անկարող է։ Հետեւապէս, Ռու-
սիոյ մէջ ոչ արմատական լրագիր կայ,
ոչ արմատական-ընկերվարական, ոչ
ընկերվարական (սնական-բար «օրի-
նաւոր») այսինքն արտօնեայ մամուլի
վրայ է խօսքս)։ Բայց եթէ խմբագիրը
իր համոզումը իրեն պահելու հարկա-
րուած է, փոխարէնը պայծառապէս
կը հասկնայ ինչ որ Ռուսիոյ մէջ «ըն-
կերվարական տրամադրութիւնը» կան-
ուանուի, ու այդ տրամադրութիւն-
ները կառավարութեան հիմնովին հա-
նակառակ են։ Այնպէս որ, մէկ կողմ
ձգելով քանի որ հազուադէպ բացա-
ռութիւններ, բայց լրագիրները կա-
ռավարութեան հակառակ են։ Այդ բա-
ցառութիւններն իսկ (անուն տալու
հարկ չկայ) իրենց ներկայացուցած
քաղաքական համար կառավարութեան
անկեղծօրէն անձնուէր հրատարակու-
թիւններն են։ Չայն պաշտպանելու ե-
տեւէ չեն, ընդհակառակը որ եւ է
անձէ պաշտպանութիւն գտնելու մի-
այն կը նային։

Ընդհանուր առմամբ, ուսւ կառա-
վարութիւնը երբեք հանրային կար-
ծիքին խորհուրդ չը հարցնէր, խոն-
դիրը լրջապէս օրէնքի մը կամ հա-
մայն ազգը շահագրգռող ձեռնարկու-
թեան մը վրայ։ Այնպէս մը կրնէ որ
ազգը իր զգալիութիւնը յայտնելու
անկարող ըլլայ, բայց, միւս կողմէ,
անոր հաւանութեան արժանի լինելու
ալ հետամուտ չը լինիր։ Այս պատճա-
ռաւ Ռուսիոյ մէջ կէս-պաշտօնական
թերթ չը կայ։ ու անօգուտ տեղ ան-
հանգիստ կրլանք օտար քաղաքագէտ-
ներու կամ քաղաքավարներու դէմ
թերթերէ ունեց հրատարակած խիստ
կամ թշնամական յօդուածներուն վրայ։
Կառավարութիւնը սովորաբար հոգ
գործ չունի։ Չանոնք կը թոյլատրէ
անվիճա համարելով։ Շատ շատ ա-
նոնք ուսական իշխանութեանց մէկ

թաղուն համամասն թիւնը որոյ կրնան
տալ։ Բայց ոչ կառավարութիւնը, ոչ
գիւտնադիտութիւնը որ եւ է կերպով
ոուս մտածմունքի այդ արտայայտու-
թեանց կապուած չեն։ Երբ շատ տաղ-
կացնեն, այդ ձեւով գրելը կարգի-
ւեն։

Սակայն, ժամանակ եղաւ որ՝ կա-
ռավարութիւնը, մեծ վտանգներու
մատնուած ու իր ուրոյն ուժերով ա-
զատուելու անգոր, հարկադրուեցաւ,
մահը հոգիին մէջ, ոչ միայն ընկե-
րութեան, հետեւապէս մամուլի գոր-
ծակցութեան պիտու ընել, այլ նոյն
իսկ այդ գործակցութիւնը խնդրել։
Երկրիս գործերուն «բարոյական» ուղ-
ղութիւնը անոնց թողելու չափ առաջ
գացին։ Այս բանը պատահեցաւ մանա-
ւանդ իրիմի աղետալի պատերազմէն
ետք։ մինչ կառավարութիւնը բարե-
նորոգումներ գործադրելու կրտուպ-
ուէր։ Իսկ ետքը ետքը, 1880ին, Ա-
լէքսանտր Բ. ի տիրապետութեան վեր-
ջերը, մամուլը տարիի մը չափ գրե-
թէ կատարեալ ազատութիւն մը վա-
յելեց։ Ամէն կողմէ նեղը ինկած,
միապետութիւնը, ոտքերուն տակ
«ուժանակով հոգին» փութումը զգա-
լով, կոմս Լոռիս Մէլիքովի ազատա-
միտ բանակալութեան փարեցաւ։ Լո-
ռիս Մէլիքով սա կրկին աշխատանքը
կատարելու էր։ յեղափոխութիւնը
ջախջախել, ու սահմանադրական վար-
չութիւնը պատրաստել։ Կրցածին չափ
զայն յաւ կատարեց։

Բանտերը ու քստորտվայրները լեց-
ուեցան, բայց մամուլը մանաւանդ,
ազատ եղաւ։

Այն ատենը միայն քաղաքական
կուսակցութիւնները որոշուեցան ու
միեւնոյն ատեն տեսնուեցաւ որ Ռու-
սիոյ մէջ թերթ մը չկար, ոչ մէկ հաս-
որ միապետութեան անձնուէր մնաց
անշահախնդրութեամբ, անոր ներ-
կայացուցած սկզբունքը սիրելուն
կամ անկէ ակնածելուն համար։

Մամուլին, ու ալ աւելի ընկերու-
թեան մէջ տիրապետող արատաւա-
նութեան դէմ մաքառելու համար,
Ալէքսանտր Բ. ինքն իսկ թերթ մը
հիմնելու որոշում տուաւ, Պետիկ ա-
նունով գոր վարեց կծու եւ ցատկոտ

ապիկարին մէկը Յիզովիչ անունով։
Այն ատենները Նովոե Վրեմիան
խղճմամբ փոթորկալից մթնոլորտը
կը հետաքննէր, ու անոր տնօրէնը,
Պ. Սուվորին զաւեշտաթերթի մը
կողմէ վարանոտ գիրքի մը մէջ ներ-
կայացուած էր, ցուցամատը նախա-
պէս թրջած ու գէպի օղը վերցուած
հովին ուղղութիւնը ճշգրտօրէն որո-
շելու համար։

Թարգմ. «Ռուսիա Տե Ռուսիա»
(Վերջ Գ. մասի)

ՅԱՆՑԱՆՔԸ ՈՐՈՒՆ Է

Բ.

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՄԱՆԱԲՈՅՐԸ

(Շար. նախորդ քիւնէ)

Հարցաքննութիւնը սկսած է ար-
դէն։

(Յիշատակարան Շարժում թիւ
59). «Երկրորդ օրը բերին Հնչակ-
եան կուսակցութեան ծրագիրը
«Ինչ մօտ գտնուած, հաշուետեար,
«ժողի ուշադրութեան և վարչութեան
«կնիքը»։

Հնչակեան կուսակցութեան ծրու-
գիւրը և կնիքը վարդ Պատրիքովի
փրան գտնուելէն վերջ երբ հար-
ցաքննութեան կը սկսին վարդ
Պատրիքով կրսէ։

«Այո, ես Ռուսաստանից մաս-
նաւորապէս եկել եմ Թրքահա-
«յիր յեղափոխելու և տհա այս
«քառած լապտերները ծրագիրը,
«կնիքը և տուար. որոնք ցուց են
«տուրիս թէ ես այդ կուսակցու-
«թեան պիտն եմ և ալլն և ալլն»։

Հարկ չենք տեսներ այս յայտա-
րարութիւնը մանրամասնօրէն հոս
դնել քանի որ ժամանակին Պոլսոյ
և գլխաւորներու մէջ հայերէն և

թուրքերէն թերթեր կարգապահ-
ներուն յայտնի է։ Հնչակեան կու-
սակցութեան տուարը, ծրագիրը և
կնիքը վարդ Պատրիքովի միջոցաւ
ոստիկանութեան գլուխ հասածին
պէս Հնչակեան մարմնոյ Պոլսոյ մէջ
գոյութիւն ունենալը թիւրք կա-
ռավարութեան մատնուեցաւ և
Հնչակեան կուսակցութեան Պոլսոյ
գործունէութիւնը գաւաճանուե-
ցաւ. Միւսիւն ՎԱՐԴ ՊԱՏ-
ՐԻՔՈՎԻ ՊԱՏՃԱՌՈՒՄԻ (ձեռքով),
Ուրեմն ի՞նչ անունով պէտք է
յորջօրջնք զինք, մենք վարդ
Պատրիքովի այլ փառահեղ և
բարձրագոյն անունը ու տիտղոսը
նշանակել ազնիւ ընթերցողաց կը
թողուիք։ (*)

Հնչակեան կուսակցութեան այդ
աւնեւարկները գոյքերը վարդ
Պատրիքովի միջոցաւ թուրք կա-
ռավարութեան ձեռք անցնելէն
վերջ, վարչութեան և խումբերու
անգամներէն քանիները իսկոյն կը
ձերբակալուին, քանիներ կը պահ-
ուին Պոլսոյ մէջ և քանիներ կը
փախչին, այնպէս որ Հնչակեան
կուսակցութեան Պոլսոյ կազմա-
կերպութիւնը (որ Հնչակեան կու-
սակցութեան ամենակարեւոր և զօ-
րաւոր ոյժն էր) քարու քանդ կը-
լայ։ վարչութիւնն իր հեռաւե-
սութեամբ ժամանակին պէտք ե-
ղածն ընելով որոշած և նոյնիսկ
խնդրած էր վարդ Պատրիքովին
այդ կարեւոր գոյքերը յանձնել.
բայց ի դուր... Ըսել է վարչու-
թիւնն իր պարտքը լիովին կատա-
րած էր։ Ի հարկէ վարչութիւնը

(*) Թուրքին այդ մեծ ծառայու-
թիւնը ոչ Մամբէ, ոչ Թիւթիւնէլ,
ոչ Խաչիկ յայտնի գաւաճան ու լը-
տեսները կարողացած են մատուցա-
նել։ Ծ. Խ.

Ա. ԵՐԾԱՆԵԱՆ

(10)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԹՕՃԱ...

- Արդեօք յանցապարտ մըն է, հարցուց տէր-
վիլը մարմնաւորած ձայնով մը...
- Ո՞վ։
- Սա՛ երիտասարդը։
- Եթէ յանցապարտ մը չըլլայ, ի՞նչ գործ ունի
այս թիարանին մէջ, տէրվիլն։
- Չէ՞ որ անցեալներ կըսէիր թէ ամենէ՛ն սիրած
մարդս է սա թիարարը։
- Այո՛, դարձեալ կըսեմ։ Եւ չարունակ լաւ աչ-
քով նայած եմ բարի ու հնազանդ եղող թիարարու-
ներու վրայ։
- Տէրվիլը խորհրդաւոր նայուածք մը նետեց վա-
նականի աչքերու մէջ... այդ նայուածքը ճառա-
գայթի մը պէս անցաւ անոր էութենէն։
- Սիրելի տէրվիլն, շարունակեց Լուծֆի աղա,
դուն մարդկութեան առաքեալն ես, ըսէ՛ նայեմ՝

ինչ է մեր Խօճայի ճակատագիրը... շատ յուսահատ
կերեւի։
— Տէրվիլը դողդաղ... գալարուեցաւ... ու ցըն-
ցուած վիճակի մը մէջ գետինը փռուեցաւ։
— Վանական երկիւղով մը մէկ կողմ քաշուեցաւ
ու հազիւ կրցաւ իր հոգեւոյն ճիշդ խղիւղ։
— Տէրվիլը տախտակաման վրայ տարածուած
փրփուրը բերնին մէջ լեցուած ու աչքերը մեռելի
մը պէս ամուր կերպով մը փակած՝ պահ մը գա-
լարուեցաւ... յետոյ սկսաւ խօսիլ այսպէս.
«Խեղճ թիարարա՛, յիշէ՛ որ Աստուած քու քայ-
լերդ կառաջնորդէ...»
«Յիշէ՛ որ կախազանէն ինչուան թիարանն ե-
կար...»
«Յիշէ՛ որ առաքինի մարդու մը հա՛ղիպեցար...»
«Մի՛ յուսահատիր, աներեւոյթ ձեռք մը կայ մո-
թին մէջ որ քու երջանկութիւնդ կը պարաստէ։»
«Օ՛հ, այո՛, դուն գոհն եղար բռնակալներու...»
«Ճակատագրիդ սեւ ամպը պիտի փարատուի շու-
տով...»
«Ես տէրվիլն եմ...»
«Աստուծոյ ու մարդերու միջեւ նուազ միջնորդն
եմ...»
«Առաքեալն եմ։»
«Մտիկ բրէ՛...» ան որ կը յուսահատի, ապագայ
չունենար։
«Քու ապագայդ արեւու պէս պայծառ է ու ես կը
տեսնեմ։»
«Աստուած քու վրայդ կը նայի։»
«Մի՛ վշտանար։»
«Արդարութիւնը չկորսուիր։»

«Համբերել գիտցի՛ր։»
— Տէրվիլը լռեց։ Փրփրալից բերանը կէս մը գոց՝
վեր ելաւ տեղէն ու աչքերը բացաւ։
— Համբարէ՛ տէրվիլին ձեռքը, Խօճա՛, ըսաւ
Լուծֆի աղա խանդաղատելի ձայնով մը։ Տեսա՛ր,
որսա՛փ բարի է եղեր քու ճակատագիրը։
— Վանական գողգողով մօտեցաւ տէրվիլին, ինչ-
պէս մեղապարտ մը կը մօտենայ իր պաշտած սուր-
բին, ձեռքը տարաւ դէպի անոր ձեռքերը եւ ուղեց
համբուրել։ սակայն տէրվիլը քայլ մը առաւ ու ետ
քաշուեցաւ։
— Ո՛չ, Աստուած չընէ՛, միմիկեց տէրվիլը սոս-
կումով մը։
— Ի՞նչու, տէրվիլն, ի՞նչու չես ուզեր որ ե-
րախտագէտ ըլլայ քեզի, նկատել տուաւ Լուծֆի
աղա։
— Երախտագէտ որո՞ւ ըլլայ... գոչեց տէրվիլը։
— Քեզի՛։
— Ինչո՞ւ։
— Այո՛։
— Ամենեւին. թող երախտագէտ ըլլայ ա՛յն Աս-
տուծոյ որ խեղճ թիարարութիւն մը քայլերը կառաջ-
նորդէ, ո՛չ թէ նուազ փախի մը։ Ես բացարձա-
կապէս յայտնած եմ քեզի թէ չեմ ընդունիր վար-
ձատրութեան ո՛չ մէկ երեւոյթ, ի՞նչու համար չես
յիշեր զայս։
— Մի՞թէ՞ երախտագիտութիւնը՝ վարձատրու-
թիւն է։
— Ի՞նչ կըսես, վարձատրութիւն չէ հապա ի՞նչ
է։
— Վանական չափազանց յուզուած էր ու մտիկ կը-

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

չէր կրնար կասկածիլ թէ, վարդ Պատրիքով այդ գոյքերը գաղտնի նպատակաւ մը իր քով պահած էր, եթէ վարչութիւնն այդ կասկածն ունենար այն ատեն ուրիշ կերպ կը վարուէր վարդ Պատրիքովի հետ...

Կարծեմ այս մասին ընթերցողը մեզ բոլորովին հակամիտ պիտի ըլլայ, բան մը որ մեր անհատական կարծիքն է համոզումն է, թէ ինչ...

Վարդ Պատրիքով ինչպէս չէր կրնար արդարանալ և իր ճակտի այդ գաղտնիքին սեւ մուրը մարել: Ինչքան արդէն լուս գիտէր որ ինչպէս ընելու ընդունակութիւն և յարմարութիւն կը պակսի իր քով, և քանի որ ինքը սկիզբէն ի վեր որոշած էր հերոս մը դառնալու, ժողովուրդին մէջ իր վրայ խօսուելու մարմանը ընդունած էր, և վերջապէս ցեղափոխական մը ըսուելու գոնէ համարաւ մը ունենար, իր չար ու վատ որոշումն ի գործ դնելու համար ամենէն կտրուկ միջոցն սեպած էր Հինգիսի կուսակցութեան գոյքերը տանիլ իր ձեռքով թիրք կառավարութեան յանձնել: չէ՞ որ այդպիսով իր չար նպատակին պիտի հասնէր և հերոս մը կոչուելու համարաւ պիտի հանէր ժողովուրդին մէջ: այլ ուս ի՞նչ փոխ իրեն որ ինքը ամբողջ կազմակերպութեան մը քայքայման և շատերու ներդրեան, տառապանաց և բանտերու ու արտորաժայրերու մէջ հեծելուն պատճառը պիտի ըլլայ: (Պատմ. վարդ. Կինչպէս որ Մոմենի և այլք արտորաժայրերու մէջ մեռան): Վարդ Պատրիքովի այս շարժանական և վատ ընթացքին դառնալուն տիտղոսէն զատ արժանաւոր մակերթի մը կարելի է տալ ընթերցողաց կը հարցնենք:

Ինչ անուամբ պէտք է որակել այս արարածը, քանի որ միջնեցարդ տեսակած չէ որ կուսակցութեան մը ծրագիրը յայտնի կերպով, գիտմամբ, թուրք կառավարութեանը ձեռք յանձնուած ըլլայ: Եւ եթէ երբեք կառավարութիւնը ծրագիր կամ կնիք ձեռք անցուցած է ան այս մասնաճիւղի անդամները յանկարծակիի բերելով խուզարկած և գտած է: Կուսակցութեան մը ծրագիրը նոյնիսկ հայ անհատներու չը յանձնուիր, քանի որ վստահութիւն չկն ներշնչեր, ինչպէս յարելի է գիտնալով հանդերձ ծրագիրը տանիլ թշնամի կառավարութեան յանձնել: Վարդոյի նման անխիղճ և գառնազգեստ գալլ յեղափոխականներուն համար ամէն վստահութիւն ընել շատ հեշտ է: այնպիսիները իրենց խաբեքալութեամբ կուզան ցեղափոխական Սուրբ աս յարէզ կրնետուն և ցեղափոխութեան մակարոյթներ կը ըլլան: Թանցանքը որուն է:

Վարդ Պատրիքով: Ժամանակ մը Պոլսոյ բանտին մէջ ամենէն հանգիստ կեանք վարելէն վերջ թուրք կառավարութիւնը զինքը ռուս կառավարութեան կը յանձնէ ուրիշ կազմակերպութեան: որուն ինք վստահ էր առաջնոց: Ահա մեր վարդ Պատրիքովի ունեցած գործունէութիւնը Հինգիսի կուսակցութեան մէջ և այդ գործունէութեամբ է (°°) որ ինքը ցեղափոխական հերոս (°°°) դարձած է:

Յ. Կ. ՃԱՆԿԻՒԼԵԱՆ
(Շարունակելի)

Ուսուցիչ մը որ Հայերէն ու Ֆրանսերէն գիտէ, Պոլսոյ կամ Ռուսիոյ հայ վարժարանի մը մէջ պաշտօն ստանձնել կուզէ, զիմեւ խմբագրութեանս:

Դէր: Բայց տէրիլի կերպարանքին վրայ պլպլացող ճառագայթը քաղցր էր, զօրաւոր էր... Օհ, վսեմ էր՝ բոլորն բովանդակ նշանակութեամբ:

— Հիմակ կը յուսամ թէ յուսահատելու բան մը չունիս, Սոմա, յարեց Լուիսի աղա: Աստուծոյ մարդը գեղեցիկ գոշակութիւններ տուաւ քու ապագայիդ նկատմամբ: Գնա՛... ասկից ետքը շարունակ աղօթք ըրէ՛:

Վանական գլուխը ծնեց ու գուրս ելնելու պատրաստուած էր, ահա՛ ներս մտան մեր ծանօթ Ֆրանսական հիւպատոսն ու երկու մանկամարդ աղջիկները:

Պաշտօնատան մէջ խաւար մը կար, որ թանձր էր...

Հիւպատոսը, նոյնպէս երկու մանկամարդ աղջիկները յարգանքով մը Լուիսիի աղային մօտեցան ու բարեկեցին:

Տեսարանը յուզիչ էր:

Մէկ խօսքով՝

Ինչ որ տեղի կուենար՝ խորհրդաւոր ու անկարգերէլ էր:

Հոն, այդ ստուերամած սենեկին մէջ ֆաքիր մը կար, թիպարտ մը կար և երկու Գիթութեան-Քոյրեր կային, որոնք՝ քստմնելի ճակատագրի մը ներքեւ ճնշուած, իրարու երես կը նայէին:

Հոն հոգին էր խօսողը... անոնց էութիւնն էր ամեն բան արտայայտողը...

Իսկ լեզուն... օհ, լեզուն յառաջ չէր երթար...

բառ չկար, որ բացատրէր:

Ուստի ներկայացումը, որ տեղի կուենար՝ մարդ-

կային արտաճիւղի իրականութիւններու ամենէն սխալին էր:

Ամենքն ալ զիրար ճանչցած էին... բայց չէին կրնար խօսիլ:

Երկու աղջիկ էր այն ձգտումն որ կը զղրէր իրենց էութիւնը:

Լուիսիի աղա եւ հիւպատոսը միայն բան մը չէին հասկնար... անոնց հոգին մութ էր:

— Հոն ինչի կ'անուամբ հայ կալանաւոր մը ունի՞ք, պարոն թիպարտապետ, հարցուց հիւպատոսը՝ Գիթութեան-Քոյրերը մէկիկ մէկիկ ներկայացնելէ ետքը:

— Խաչիկ, յեշտեց Լուիսիի աղա զարմանքով մը:

— Այո՛:

— Ունի՞ք... անասիկ ձեր դէմը կը գտնուի:

— Այո՛:

— Նոյն ինքը:

Հիւպատոսը համակրական նայուածք մը նետեց Վանականին վրայ, որ յովտունքէն պատին կողմէն ընտել էր ու կը զղորտ յետոյ մանկամարդ աղջիկներուն դարձաւ գոհունակութեան ժպիտով մը:

— Եստ տարի է որ այս թիպարտին մէջ կը գրտնուի, անանկ չէ՞, պարոն թիպարտապետ, վրայ բերաւ հիւպատոսը:

— Մօտաւորապէս չորս տարի է, միմիջեց Լուիսիի աղա:

— Արդեօք՝ ինչ քան էր իր վճիռը...

— Դժբաղդաբար «ցկեանս տաժանակիր աշխատութեան» դատապարտուած է:

— Յիւսուս:

— Այո՛:

— Ունի՞ք տեղեկագիրներ անոր յանցանքներու վերաբերմամբ:

— Ո՛չ, միայն վճռագիրը կայ:

— Ըսելէ թէ գործած յանցանքին վրայ տեղեկութիւն մը չունի՞ք:

— Ամենեւին: Կուզէ՞ք իմանալ:

— Կը տա՞ք իմ: Երբ որովհետեւ երկու մանկամարդ հիւրերս այդ պատճառով հոս եկած են:

— Չէ՞ որ Ֆրանսոսիներ են, ըսիք:

— Ճշմարիտ է... բայց խղճի պարտք մը կատարելու համար մինչեւ թիպարտը զաւու հարկադրուած են:

— Ինչպէս, պարոն հիւպատոս:

— Երկուստարդին մայրը, իստին ծայր թշուառութեան մատնուած վիճակի մը մէջ, կը պաղատէ իրենց որ մէկ հատիկ զուկէն տեղեկութիւն մը տանեն:

Այս պաղատանքը չմերժուիր... անա՛ բոլորը: Լուիսիի աղա նշանացի ձեռով մը հասկցուց Վանականին որ գուրս ելնէ: Վանական հեռացաւ:

Ան ատեն Լուիսիի աղա հիւպատոսին ուղղելով իր խօսքը միմիջեց:

— Գիտէ՞ք պարոն հիւպատոս, ամենէն ազնիւ մարդն է թիպարտին մէջ այդ կալանաւորը: Չորս տարի է որ բերդին վերաբերեալ աշխատութեամբ կը զբաղի, ինչ կըսէք, չեղաւ օր մը ուր զգոհութիւն մը լսէի իրմէն: Այսօր կանչեր եմ հարցունելու համար, նորէն բան մը չխօսեցաւ:

(Շարունակելի)

թէ՛ հրդեհ՝ ծագած է Հայոց Թաղին մէջ բնակող Շիրինեան Մ. Ռ. առջէի տունէն: Հայոց 2,000 տուններէն 804ը այրած և 5,000է աւելի անձեր անպատասպար մնացած են: Ս. Թորոս եկեղեցին, յարակից վարժարանը՝ տակի խանութներով և Առաջնորդարանը հրոյ ճարակ եղած են: միայն բաղնիքին մը սփռ 500 ոսկի կը հաշուուի: Հայ արկածելոց օգնութիւն փութացնելու նպատակաւ Պատրիարքարանը հանգանակութեան ձեռնարկած է:

— Խաղական Ովկիանոսի մէջ Ռուսիոյ տիրապետութեան տակ գտնուող Սաղաի կղզիին մէջ՝ որ վրատիվադօքի և Ճարոնի ճամբուն վրայ կը գտնուի, արտարական և գործի պատճառաւ քանի մը հարիւր հայեր կը բնակին: ասոնք նիւթական ամէն միջոց պատրաստած են եկեղեցիի մը կառուցման համար: առ այս միմիայն կառավարութեան արտօնութեանը կը սպասեն:

ԾԱՅՏԱՐԱՐՈՒԻՒԻՆ

Աղջկանց կրթարանն իր 7րդ տարեշրջանը կը սկսի յառաջիկայ Սեպտ. 2/15 ին երկուշաբթի օրը: Ընդունելութիւնը և մասնաւոր տեսակցութիւնը կը կատարուին ամէն օր ժամը 9-12, հին Գաղարմային դիմացը:

Տօբէն

Աղջկանց կրթարանի

Պ. ՃԻԹԵՐՃԵԱՆ

Վառնա, 26 Օգոստոս

Одговорникъ Н. Драгулевъ
Печ. на Хр. Н. Войниковъ—Варна